



ԵՐԿՐԵԱՔԹԻ, 28 ՀՈԿՏԵՄԵՐ, 2024

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՁ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս քու. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՏՈՒՐ ՈՐ ՀԱՍԿՆԱՄ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԴԻ

Իրաւունք եւ արդարութիւն ըրի.
նեղիչներուս ձեռքը մի մատներ զիս:
Վստահութիւն տուր ինձի՝ քու ծառայիդ, թէ՛ պիտի օգնես ինձի,
եւ թող ամբարտաւանները չնեղեն զիս:
Աչքերս յոգնեցան փրկութեանդ սպասելէն,
արդար խոստումիդ կատարումին սպասելէն:
Ծառադ եմ ես, սիրովդ վարուէ ինձի հետ,
կանոններդ սորվեցուր ինձի:
Քու ծառադ եմ ես, իմաստնացուր զիս,
որպէսզի քու պատուիրաններդ քանչնամ:
Ժամանակն է որ գործի անցնիս, Տէր,
որովհետեւ քու Օրէնքդ խախտեցին,
մինչ ես կը սիրեմ պատուէրներդ՝
ոսկիէն, գուտ ոսկիէն ալ աւելի:
Ահա թէ ինչու՝ արդար կը գտնեմ բոլոր հրահանգներդ,
եւ կ'ատեմ ամէն տեսակի ստութիւն:

ՇԱՐՎԱԿԱՆ

Թագաւոր երկնաւոր, զԵկեղեցի Քո անշարժ պառնա
Եւ զերկրապագուս անուանող ՔումՊառնա ի խաղաղութիւն:

ԱՂՈՐՁ

Շնորհակալութիւն Քեզի, ով Տէր, մեր Աստուածը, Դուն որ մեզ ուրախացուցիր տեսանելի լոյսովդ, իսկ Քու պատուիրաններուդ հոգեւոր լոյսաւորեցիր Քեզի հաւատացողները: Զօրացուր մեզ, Տէր, որպէսզի կարենանք Քու պատուիրաններդ պահել ու գործադրել եւ լուսաւորուած մտքով կարենանք միշտ Քու կամքդ կատարել եւ հասնիլ Քու պատրաստած բարիքներուդ Քու սուրբերուդ հետ միասին, եւ շնորհակալութեամբ փառաւորելու Քեզ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, յաւիտեանս. ամէն:

ՇԱՐՎԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան գՏէր աղաչեսցուր: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈՅՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ՍԱՂՄՈՍ 72

ԱՂՈՅՔ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՄԱՐ

Ով Աստուած, թագաւորին յանձնէ դատաստաններդ.
արքաորդիին յանձնէ արդարութեանդ գործադրութիւնը.
որպէսզի արդարութեամբ դատէ քու ժողովուրդդ.
քեզի համար տառապողներուն իրաւունքը վերահաստատէ:
Թող լեռները ժողովուրդիդ բարօրութիւն ընծայեն.
բլուրները արդարութիւն պարգեւեն:
Թող թագաւորը ժողովուրդին աղփատներուն դատը պաշտպանէ,
ագատագրէ չփաւորները, եւ նզմէ գանոնք հարստահարողները:
Թող ապրի այնքան՝ որքան ատեն կը մնան
արեւը եւ լուսինը, սերունդէ սերունդ:
Անձրեւի պէս թող իջնէ արտերուն վրայ,
տարափներու պէս ոռոգէ երկիրը:
Իր օրով՝ արդարութիւնը թող ծաղկի,
եւ առատանայ բարօրութիւնը,
Որքան ատեն որ կը մնայ լուսինը:
Թող անիկա տիրակալէ ծովէ ծով,
Գետէն սկսեալ մինչեւ երկրին ծայրերը:
Անոր առջեւ պիտի խոնարհին անապատին բնակիչները,
թշնամիները անոր առջեւ հողը պիտի համբուրեն:
Սպանիայի եւ Միջերկրական ծովը եզերող
երկիրներուն թագաւորները անոր տուրք պիտի տան,
Արաբիայի ու Սարայի թագաւորները անոր ընծայ պիտի բերեն:
Բոլոր թագաւորները անոր առջեւ պիտի խոնարհին,
բոլոր ազգերը անոր պիտի ենթարկուին:
Որովհետեւ անիկա հարստահարողին ձեռքէն
կ'ագատէ չփաւորները, աղփատն ու անօգնականը:
Կը խղճայ տկարին ու չփաւորին,
եւ կը փրկէ չփաւորներուն կեանքը:
Հարստահարութենէն եւ բռնութենէն կ'ագատագրէ գանոնք,
որովհետեւ անոնց կեանքը թանկագին կը նկատէ:
ապրի թագաւորը, եւ Արաբիայի ոսկին ստանայ:
Թող շարունակ աղօթքներ բարձրանան իրեն համար,
անոր վրայ միշտ օրհնութիւն թող տեղայ:
Տորենի առատութիւն ըլլայ ամբողջ երկրին մէջ,
եւ հասկերը ծփան մինչեւ իսկ լեռներու կատարին,
այնպէս՝ ինչպէս Լիբանանի մէջ կ'անին:
Քաղաքները թող ծաղկին, դաշտին մէջ անող խոտերուն նման:

Անոր անունը յաւիտեան մնայ .

անոր հոչակը մնայ այնքան՝ որքան ատեն որ կը մնայ արեւը :

Երկրի բոլոր ազգերը թող իրմով օրհնուին, եւ երանի տան անոր :

Օրհնեալ է Տէր Աստուած, Աստուածը իր ժողովուրդին .

միայն ինքն է որ հրաշալի գործեր կ'ընէ :

Յաւէտ օրհնեալ է իր փառաւոր անունը .

ամբողջ աշխարհ անոր փառքով թող լեցուի : Ամէն, ըլլայ :

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ՍԱՂՄՈՍ 72

ԱՂՕԹԸ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՄԱՐ

Ահաւասիկ այսպեղ կ'աւարարի երկրորդ մասը Սաղմոսներուն : 150 Սաղմոսները որպէս ժողովա-ծու բաժնուած է հինգ մասերու կամ գիրքերու (1-41, 42-72, 73-89, 90-106, 107-150) : Սաղմոսները ունին նաեւ դասակարգումներ, այսինքն՝ ինչ բանի համար գրուած, օրհներգութիւն, թագաւորական, ուխտա-ւորներու, փաճարական, իմաստութեան, ողբի, գոհաբանական, կամ յոյսի, վարահութեան, ներքին խաղաղութեան եւ ուրախութեան Սաղմոսներ : Ահա 72-րդ այս Սաղմոսը թագաւորական սաղմոսներու շարքին կը պատկանի : Այս փոյսի Սաղմոսները ոմանք կը հոչակեն Աստուծոյ թագաւորութիւնը համայն փեղեղքին վրայ, իսկ ուրիշներ կը գովերգեն երկրի վրայ այդ թագաւորութեան ներկայացուցիչը, որ Տիրոջ կողմէ օծուած թագաւորն է, եւ աղօթք ու մաղթանք կ'ընեն անոր համար : Այս Սաղմոսները բոլորն ալ մեսիական Սաղմոսներ են, այսինքն՝ կը վերաբերին Քրիստոսի եւ անոր թագաւորութեան : Ուրեմն ըստ այնմ պէտք է կարդալ եւ անկէ քաղել իմաստը : Որովհետեւ բովանդակութիւնը եւ զննենք, քննենք, ապա պիտի տեսնենք որ Դաւիթ ինք արդէն որպէս թագաւոր ուրիշ թագաւորի մը համար աղօթք կ'ընէ : Երեւի, երբ պարմականօրէն նայինք, կը նշանակէ՝ Դաւիթ աղօթք կ'ընէ իրմէ յետոյ եկող, իրեն յաջորդ թագաւորին, որ այս պարագային Սողոմոնն է, իր որդին : Հերաբրքրական է, որ նաեւ այս Սաղմոսը ծանօթ է որպէս Սողոմոնի ժողովածուէն, իսկ Եօթանասնից թարգմանութեան մէջ՝ Սողոմոնի համար : Ուրեմն, Դաւիթ Աստուծմէ կը խնդրէ, որ այդ թագաւորը արդարութեամբ թագաւորէ եւ ըլլայ իրաւ ներ-կայացուցիչը Աստուծոյ : Խորքին մէջ, Աստուծոյ երբ Իր ժողովուրդը դուրս բերաւ Եգիպտոսէն, նպա-տակն էր, որ այդ ժողովուրդը սարի Աստուածպետական դրոյթեամբ : Այսինքն՝ ինչպիսի անուններ ալ փրուած ըլլային այդ անձին՝ դարաւոր, թագաւոր, իշխան, նախագահ, վարչապետ, կարեւորը՝ անիկա իրաւ ու ճշմարիտ ներկայացուցիչը ըլլար Աստուծոյ, եւ ըստ այնմ Աստուծոյ նման արդարութեամբ թագաւորելու : Որպէսզի այդպիսի նկարագիր մը ունենար թագաւորը, կը նշանակէ պէտք է մնայուն ըլլար կապը Աստուծոյ հետ : Անոր կամքին համաձայն ապրելու, Անոր կամքին հաղորդակից ըլլալու, այլ խօս-քով՝ Աստուծոյ Հոգիով առաջնորդուելու : Այլապէս, Սաւուդի նման դուրս պիտի մնար Աստուծոյ ցանկէն, եւ Աստուծոյ անոր կենդանութեան իսկ Սամուէլ մարգարէն պիտի դրկէր Յեսաիի փունը, որպէսզի անոր որդիներէն մէկը թագաւոր օժէր, եւ այս պարագային՝ Դաւիթ ինք է : Բայց, փակաւին, Դաւիթ ալ չէր այն թագաւորը որ Աստուծոյ հաճելի պիտի ըլլար, այլ՝ Դաւիթի սերունդէն, անոր շարաիդէն եկողը : Պարմականօրէն այդ անձը Սողոմոնն էր : Իսկ Սողոմոն անունը կը նշանակէ իմաստութիւն : Տակաւին, Դաւիթ ինք խոստացաւ Աստուծոյ համար փուն մը շինելու, բայց չկրցաւ իրականացնել այդ խոստումը, որով-հետեւ Աստուծոյ նաեւ յիշեցուց Դաւիթին, ըսելով. «Դուն իմ անուանս փուն պիտի չշինես, որով-հետեւ դուն պարտաւոր մարդ ես ու շար արիւն թափեցիր : Քու որդիդ Սողոմոնը պիտի շինէ իմ փունս ու իմ սրահներս, որովհետեւ անիկա ինձի որդի ընտրեցի ու ես անոր հայր պիտի ըլլամ եւ անոր թագաւորութիւնը յաւիտեան պիտի հաստատեմ, եթէ այսօրուան պէս իմ հրմաններս ու պարտիքներս յարարեւէ գործադրել» Ա. Մնացորդաց 22, 28 : Դաւիթ շարունակելով, իր խօսքը կ'ուղղէ Սողոմոնին ըսելով. «Որ-դիակ իմ Սողոմոն, քու հորդ Աստուծոյ ճանչցիր, ու անոր կարարեալ սրտով ու յօժար կամքով ծառայութիւն ըրէ. որովհետեւ Տէրը սրտերը կը քննէ եւ ամէն մտքերու խորհուրդները կը ճանչնայ : Եթէ զանիկա փնտռես՝ պիտի գտնես, եւ եթէ զանիկա թողուս՝ ան ալ քեզ յաւիտեան պիտի մերժէ : Հիմա նայէ, որ Տէրը քեզ ընտրեց իր սրբարանին համար փուն մը շինելու, զօրացիր եւ այս գործը լրացուր» : Ահա թէ ինչու փաճարը կը կոչուի՝ Սողոմոնի փաճարը : Խորքին մէջ Աստուծոյ փաճարն է Սողոմոնի կողմէ շինուած : Երկրորդ, Սողոմոն անունը կը նշանակէ՝ Իմաստութիւն, եւ հետեւաբար՝ Աստուծոյ ճշմարիտ փաճարը շինողը պիտի

ըլլար, ճշմարիտ Սողոմոնը՝ ճշմարիտ Իմաստութիւնը, այսինքն՝ Յիսուս Քրիստոսը ինք: Որովհետեւ Սողոմոնի շինած փաճարը քանդուեցաւ, յետոյ վերաշինուեցաւ, յետոյ դարձեալ կործանեցաւ, եւ այսօր չկայ այդ փաճարը, բայց Քրիստոսի շինած փաճարը՝ որ անձեռագործ փաճար է, անիկա կը մնայ կանգուն այնքան արեւն, որ զայն հեռու կը պահենք ամէն փեսակի ապականութենէ, այլապէս՝ շար յարակ է Դաւիթ խօսքը ուղղուած իր որդիին՝ «Եթէ զանիկա թողուս, ան ալ քեզ յաւիտեան պիտի մերժէ»:

Վերադառնանք Սողոմոսին: Դաւիթ կը խնդրէ Աստուծմէ որ Իր դաստիարակները եւ այդ դաստիարակներուն արդարութեամբ գործադրութիւն յանձնէ թագաւորին, որովհետեւ վերջ ի վերջոյ երկրի վրայ Աստուծոյ ներկայացուցիչն է, եւ իբրեւ այդպիսին՝ արդարութեամբ դատելու, ու մանաւանդ՝ Աստուծոյ համար փառապողներուն իրաւունքը վերահաստատելու: Այսպէղ նաեւ կարելի է փեսնել, որ Սողոմոն ինք կ'աղօթէ ինքն իրեն համար, եւ Աստուծմէ կը խնդրէ իմաստութիւն, որպէսզի արդարութեամբ դատը փեսնէ ժողովուրդին: Գ Թագաւորաց 3 գլուխ: Սողոմոն խոնարհութեամբ կը խնդրէ Աստուծմէ, որ իրեն իմաստութիւն փրոյտի, եւ ասիկա օրինակն է իւրաքանչիւր ղեկավարի, որ յանձն կ'առնէ առաջնորդելու ժողովուրդ կամ պետութիւն: Այնպէս ինչպէս առիթով մը, երբ Քրիստոս ներկայացաւ Պիղատոսին, նախքան իր խաչելութիւնը, Պիղատոս ինքզինք ներկայացուց թէ ունի իշխանութիւն, Քրիստոս յիշեցուց, թէ ինք չունի այդ իշխանութիւնը, իրեն փրոյտ է այդ իշխանութիւնը: Նոյնպէս ալ մեր պարագային, մենք կը կարծենք որ իշխանութեան աթոռին որ նստինք, ուրեմն ամէն ինչ ընելու իրաւունքը կ'ունենանք, մոռնալով, որ այդ իշխանութիւնը կը փրոյտի, եւ յետոյ եր կ'առնուի, եւ մեր ըրածին համար ալ հաշիւ ունինք փառք:

Կը խնդրէ, որ իմաստութեամբ եւ արդարութեամբ փառապողներուն իրաւունքը վերահաստատել, աղքատներուն դատը պաշտպանէ, ջրաւորները ազատագրէ եւ հարստահարողները ճզմէ: Յարակ է այսպէղ խօսքը, Աստուծոյ համար փառապողներուն: Որովհետեւ յաճախ կրնանք այս կամ այն ձեռով փառապիլ, բայց յանուն ինչ բանի: 5-րդ համարը, «թող ապրի այնքան, որքան, ...», իսկ երրայերէն բնագրին մէջ կը կարդանք, «թող վախնայ, այնքան որքան, ...» որմէ է որ պէտք է վախնայ, Աստուծոյ վախը, Աստուծոյ երկիւղը ունենայ, այսինքն՝ չարէն հեռու մնայ: Նոյնինքն Սողոմոնի խօսքերն են. «Իմաստութեան սկիզբը երկիւղ Տեսնանք», իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է: Իսկ Դաւիթ կ'ըսէ. «Աստուծմէ վախնալ կը նշանակէ, չարէն հեռու մնալ» Սողոմոս 35: Աստուծոյ երկիւղով եւ Աստուծոյ Խօսքին համա-ձայն ապրի թագաւորը, եւ այդ խօսքը նմանցնէ անձրեւի որ կ'իջնէ արտերուն վրայ եւ կ'ոռոգէ երկիրը իր բերքը, պտուղը փալու համար:

Ահա այս Սողոմոսը կը դառնայ շուքը գալիք այն իրականութեան, որ ճշմարիտ թագաւորը որ արդարութեամբ պիտի դատէ, իրաւունքը վերահաստատել, աղքատին դատը պաշտպանէ, ջրաւորները ազատագրէ, պիտի փրկակալէ ամէնուրեք, անոր առջեւ պիտի խոնարհին բոլոր բնակիչները, պիտի ըլլայ նոյնինքն՝ Յիսուս Քրիստոս: Ահա թէ ինչ կը կարդանք Յովհաննու Աւետարանին մէջ. «Հայրը ունէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է Որդիին» 5:22: Այս Սողոմոսը իրօք Մեսիական Սողոմոս է, որովհետեւ այս բոլորը Քրիստոս է որ կատարումին կը հասցնէ, Իր խաղաղութեամբը եւ արդարութեամբը, եւ այս բոլորին հետ մէկտեղ նաեւ այն օրինութիւնն ու առատութիւնը որ կու փայ մարդուն:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ էո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ էո արարածոց եւ ինձ բազմամեղիս: